

ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԸ ԽԱՂԱՊԱԿԱՍՆԵՐ ՉԵՆ, ԴՐԱՆՔ ԻՆՔՆԱԿՈՉ ԶՈՐՔԵՐ ԵՆ

Posted on July 10, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Արա Պապեան, Lragir.am, 5 Հունիս 2021

Քննարկուող նիւթի այժմեականութիւնը նկատի ունենալով կ'արտատպենք սոյն հարցազրոյցը: Դիւանագետ Արա Պապեան անձանօթ անուն մը չէ keghart.org-ի ընթերցողներուն համար: Ան յաճախ երեւցած է մեր թերթին մէջ իր գրութիւններով կամ իր հետ կատարուած հարցազրոյցներով: (Խմբ.)

Ռուսական զորքերը խաղաղապահներ չեն, դրանք ինքնակոչ զորքեր են, Հայաստանի համաձայնութեամբ են, բայց միջազգային կարգավիճակ չունեն

ՀԱՊԿ պատասխանից հետո Հայաստանը պետք է նոր դաշնակիցներ որոնի՝ փորձելով լուծել անվտանգային խնդիրները: ՀԱՊԿ ու Ռուսաստանի վրա հույս դնելու որևէ հեռանկար չկա Lragir.am-ի հետ զրոյցում այս մասին ասաց «Մոդուս Վիվենդի» կենտրոնի ղեկավար Արա Պապեանը: «Մենք պետք է տեսնենք, թե որ երկրների շահերն են այս փուլում համընկնում մեր հետ, փորձենք նրանց հետ դա բերել պայմանագրային հենքի, փաստաթղթային ձևակերպում տանք», - հավելեց նա:

Նշենք, որ ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ստանիսլավ Չասը, անդրադառնալով ադրբեջանական զորքերի՝ ՀՀ տարածք ներխուժման հարցին, ասել է, որ այն «սահմանային միջադեպ» է, ոչ թե ներխուժում և չի համապատասխանում կազմակերպության հավաքական պաշտպանության կանոնադրության դրույթներին: «Պետք է հասկանալ, որ ՀԱՊԿ ներուժն օգտագործվում է միայն ագրեսիայի, հարձակման դեպքում: Սա սահմանային միջադեպ է, այն պետք է լուծվի, և մենք կողմ ենք այն խաղաղ ճանապարհով լուծելուն», - հայտարարել է նա:

ՀԱՊԿ-ին դիմելու մասին հայկական կողմը հայտարարել էր մայիսի 13-ին: Դրանից մեկ օր առաջ՝ մայիսի 12-ին ադրբեջանական զինված ուժերը ներխուժել էին ՀՀ տարածք՝ Սյունիքի և Գեղարքունիքի մարզեր և մինչ օրս շարունակում են մնալ մի շարք բնակավայրերի վարչական տարածքներում: ՀԱՊԿ-ին ուղղված դիմումը համապատասխանում էր Հավաքական անվտանգության պայմանագրի հոդված 2-րդի 2-րդ պարբերությանը՝ համաձայն որի «մեկ կամ մի քանի մասնակից պետությունների անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և ինքնիշխանությանը սպառնացող վտանգի կամ միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնացող վտանգի դեպքում մասնակից պետություններն անմիջապես կակտիվացնեն համատեղ խորհրդակցությունների մեխանիզմը, իրենց դիրքորոշումները համակարգելու և ծագած սպառնալիքը վերացնելու նպատակով միջոցներ ձեռնարկելու համար»:

Արա Պապեանի խոսքով՝ ՀԱՊԿ այս պատասխանը նշանակում է, որ մեր և ՀԱՊԿ անդամ երկրների շահերը հակոտնյա են: «Այդ կառույցը մեռելածին է, չէր կարող գործել, քանի որ անդամներից շատերը՝ Բելառուսը, Ղրղզստանը, Ղազախստանը ունեն իրենց շահերը, և միշտ գերակշռել են Ադրբեջանի հետ իրենց շահերը: Ռուսաստանը ևս՝

որպես հիմնական միջուկ, ցույց է տվել, որ ինքը հավատարիմ չի մտնում իր դաշնակցային հարաբերություններին՝ զենք է վաճառել, օգնել է Ադրբեջանին: Հետևաբար, ձևականորեն կա ինչ-որ կառույց, բայց իրականության մեջ դա որևէ կապ չունի դաշնակցային որևէ համագործակցության հետ», - ասաց Պապյանը:

Ադրբեջանական զորքերը մայիսի 12-ից մինչ օրս շարունակում են մնալ ՀՀ տարածքում: Հայտարարվել է, որ սահմանին՝ Սոթքից մինչև Խոզնավար, կանգնելու են ռուս սահմանապահներ: Արա Պապյանն, անդրադառնալով այս հարցին, ասաց. «Երբ Նիկոլ Փաշինյանն իր ընտրվելու հաջորդ օրը խոսում էր Հանրապետության հրապարակում, նա ասաց, որ զորքերը պետք է հայելանման հետ քաշվեն, դրանց մեջտեղում տեղակայվեն ռուս սահմանապահներ: Սա նշանակում է, որ Ադրբեջանը, որը որոշ հատվածներում մինչև 9 կմ խորացել է ՀՀ տարածք, դրա զգալի մասը շարունակելու է պահել իր վերահսկողության տակ: Պայմանական ասած՝ եթե ինքը 5 կմ խորացել է, 1 կմ հետ կգնա, 4 կմ-ն կպահի: Մենք էլ մեր կողմից 1 կմ հետ կգնենք, այսինքն՝ այս հաշվարկներով, պայմանական, մենք 6 կմ տարածք կկորցնենք՝ 2-ը՝ որպես չեզոք գոտի, 4-ն էլ Ադրբեջանի վերահսկողության տակ: Իսկ ամերիկյան կողմն առաջարկում էր, որ նախ ադրբեջանական զորքերը պետք է հեռանան ՀՀ տարածքից, վերադառնան իրենց դիրքեր, հետո նոր տեղակայվեն խաղաղապահ ուժեր»:

Արա Պապյանի խոսքով՝ այստեղ առաջին պայմանն այն է, որ Ադրբեջանի ռազմական ներկայությունը չպետք է լինի ՀՀ տարածքում: «Ինքն անօրինական եկել մտել է սովետական Հայաստանի տարածք: Երկրորդ, երբ արդեն Ադրբեջանը կվերադառնա իր դիրքեր, այստեղ պետք է դիտարկվի խաղաղապահների հարցը: Ռուսական զորքերը խաղաղապահներ չեն, դրանք ինքնակոչ զորքեր են, Հայաստանի համաձայնությամբ են, բայց միջազգային կարգավիճակ չունեն: Եթե պետք է լինեն միջազգային խաղաղապահներ, բնականաբար, հարցը պետք է մտնի ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդ: Եթե ՄԿ-ի անվտանգության խորհուրդը կորոշի, որ միայն ռուսական զորքեր կլինեն, կլինի այդպես: Բայց քիչ հավանական է, որ ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը նման որոշում կայացնի, ինքը պետք է աշխատի, որ այդ զորքը միջազգային կազմ ունենա», - նշեց Արա Պապյանը:

Comments



Armen Baghdoyan – 2021-07-11 02:30:02

Արա Պապեանի պես անձէ մը իրապաշտ, անաչառ և հայանպաստ քաղաքական ելոյթ ակնկալել՝ արջորէն հակիթ սպասելու համազօր ինքնախաբեութիւն է: Ամէն հայ պետք է անայլայլ հասկնայ, եթէ տակաւին որևէ երկմտանքի մէջ է, որ Ղրաբաղի հայկական զօրքերու և առ հասարակ դարաբաղի հայ բնակչութեան ամբողջական բնաջնջումը կասեցուց Ռուսաստանը՝ փրկարար զօրքերու «ինքնակոչ» միջամտութեամբ: Այս իրականութիւնը չարափոխել անհիմն և իմաստազուրկ ձաբռտութենքով՝ աղաղակող ռուսաստեացութիւն է: Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել ազգադաւուրութիւն: Բայց կը խնայեմ յանուն Հայաստանի վերականգնումին:



Armenag Yeghiayan – 2021-07-10 04:26:37

«Իսկ ամերիկյան կողմն առաջարկում էր, որ նախ ադրբեջանական զօրքերը պետք է հեռանան ՀՀ տարածքից, վերադառնան իրենց դիրքեր, հետո նոր տեղակայվեն խաղաղապահ ուժեր»: Աղէկ, սակայն այս առաջարկը ո՞վ իրականութեան վերածել յանձն պիտի առնէ եւ ինչպէ՞ս: Արա Պապեան քիչ մըն ալ այս ուղղութեամբ չի՞ կրնար լուսաբանել: